

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՆԵՐԿԱՅԻՑԻՑ ԵՒ ԱՆՑԵԱԼԻՑ

ԱՐԵՎԱԼՈՅԹ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ

ԳԱՐՆԱՆԱՑԻՆ ԱՌԱԽՈԾ

Գեղեցիկ ես դու, զարնան առաւօտ,
Երբ հեռու հեռու լեռների ծայրից
Նայում է արև դէմքով ծիծաղկոտ,
Երբ բարձրանում է մէդը դաշտերից,
Երբ տիրած լուսին, իբր աքսորական,
Խցնում է հանդարա իւր բարձըր դահից,
Ուր շողջողում են ամպեր կուսական,
Որպէս կարապներ մաքուր և անբիծ,
Երբ ծերուկ գագաթն հըսկայ լեռների
Վառւում է առաջդ, իբրև աղամանդ,
Երբ թեւաւո րներ անհուն եթերի
Անվերջ շարքերով անցնում են ազատ,
Մառեր, ծաղիկներ՝ մարգարտեայ ցոլով
Չարդարւած հանդերձ դեռ կէս-գիշերին,
Պըճնում են այգի ոսկեվառ շողով
Արարշի կ ազմած ուրախ խընճոյքին,
Ու մօտիկ սարի ծերպերում պահւած
Գիւղից բարձրանում է ծուխ ոլորուն,
Իբրև ջերմ ազօթք երկինք առաքւած,
Իբր առաւօտի կանուխ գոհութիւն:

* * *

0', այդ ժամանակ ինչպէս ջերմաղին
 թշղխում է աղերս սըրտի խորքերից,
 Որ միշտ հաշտ հայէր իւր ձեռագործին
 նամ, որ այս ամենն արաւ ոչընչից.
 Ի՞նչպէս շար 'ի շար փայլում են աչքիդ՝
 Առաջին յոյսեր վազուց խորտակւած,
 Ի՞նչպէս հըրճում է զօրացած հոգիդ՝
 Ցառապանք ու վիշտ ծանակ համարած.
 Եւ ըզգում ես զու, որ կը գան օրեր,
 Երբ այդ գեղեցիկ աշխարհում մարդիկ
 Եւ գըղեն իրար, որպէս եղբայրներ,
 Վիրու ըստերում անանց երջանիկ...

1890 թ.